

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Բազում համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Բազում	Ավագանու հերթական նիստ	13,03,2020	12:00	Բազումի համայնքապետարանի նիստերի դահլիճ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020 թ Մարտի 13-ին՝ ժամը 12.00-ին Բազումի համայնքապետարանի նիստերի
դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

ժամը՝ 12.00

1.Բազում համայնքի ավագանու 2020թ. թիվ 3 նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ս. Հարությունյան

2.Համայնքի բնակչին դրամական օգնություն ցուցաբերելու մասին

զեկ. Ս. Հարությունյան

3.Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա
ստանալու նպատակով << Բազում համայնքի ներհամայնքային ճանապարհների
սալարկում>> ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն
տալու մասին

զեկ. Ս. Հարությունյան

ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու թիվ 3 նիստի օրակարգը:

1. Թիվ 3 նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Համայնքի բնակչին դրամական օգնություն ցուցաբերելու մասին
3. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Բազում համայնքի ներհամայնքային ճանապարհների սալարկում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով , համայնքի ավագանու 2014 թ-ի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ Բազում համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին թիվ 31-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումը և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչ Գոհար Պոստոլայանը դիմումը և համայնքի բյուջեից նրա ընտանիքին հատկացնել սոցիալական օգնություն՝ 30000 /երեսուն հազար / ՀՀ դրամի չափով:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
«ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ
ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ
ՍԱԼԱՐԿՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Բազում համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով <<Բազում համայնքի ներհամայնքային ճանապարհների սալարկում>> ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ